բարձունները և երեսփոխանը դեռ չեն դառել համախոհ, ուստի Առաջնորդի հրամանը մինչև այսօր մնում անկատար, իսկ ուսումնարանի շինութիւնը այնչափ վնասուել է և խանգարուել, որ մի տարուց յետոյ անկարելի կլինի շարունակել նորա մէջ ուսումը։

Տեսնելով ուսումնարանի այսպիսի խեղճ դրութիւնը և ի նկատի ունենալով Առաջնորդի երկու հրամանագրութիւնը, ես առաձին գրութիւնով ի 23 սեպտ. անցեալ 1872 ամի № 1 առաջարկեցի երեցփոխան Յովսէփ Ամիրխանեանցին կատարել գոնեա մասնաւոր կարկատանքը փոխելով տանիքի վերայ կոտրատած կղմինտրները որ խափանուի անձրևի ջրի կաթիլը։ Իրր կատարելով իմ առաջարկութիւնը՝ պ. Ամիրխանեանցը տնօրինել էր փոխել 20-40 կղմինտր, այն ինչ հարկաւոր էր փոխել 1000 և աւելի հատ։

Սինոդն Ս. Էջմիածնի իմանալով իմ յայտարարութիւնից Սղնախի սուրբ Սահակեան ուսումնարանի ողորմելի դրութիւնը՝ ունի շուտով առնել արժանաւոր տնօրէնութիւն կարևոր բարեկարգութիւն տալու համար նոյն ուսումնարանին։

Աւարտելով այստեղ մեր վերահասութեան բովանդակութիւնը և նորա հետ միասին և մեր յօդուածը, աւելորդ ենք համարում առնել որ և իցէ տեսակ խորհրդածութիւն, այլ բաւականանում ենք մի անգամ դարձեալ կրկնել սրբազան Պօղոս Առաքեալի խօսքը թէ՝ Ի-է -ր+ Դ-Ն-Լ-Ն՝ -Ր-Ջ -Դ-Ն-Ց-Ն յ-Ն-Ի-Ն-Ն-՝, զի Ե -ՅՐ-Ն Ի-Ի-Ն-Ն։

ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՌՏԱՄԵԱՆ.

ՆՈՒԷՐ ԵՒՓԻՄԻ ՏԻԿՆՈՋ.

Վաղարշապատու Ս. Գայիանեան Օրիորդաց Ուսումնարանի Հոգաբարձութիւնն, ստանալով այս օրերս Կ. Պոլսեցի Համեստափայլ Տիկին Եւփիմէ Մաղումեանցից (որ է քոյր մեր Վեհափառ Հայրապետի) տարեկան նուիրաբերութիւնը 100 ռ. արծ. վասն սոյն 1875 ամի, եւ մի Կ. Պոլսեցի աղգասէր Պարոնից նոյնպէս 100 ռ. արծ. միանուագ նուէր յօդուտ նոյն ուսումնարանի, սեպուհ պարտաւորութիւն է համարում իւր հրապարակական շնորհակալութիւն մատուցանել նոցա, եւ մանաւանդ բարեպաշտուհի Տիկին Եւփիմէ Մաղումեանցին, որն լինելով սկզբնական պատճառ բացման այս ուսումնարանի, իրրեւ բարերարուհի եւ միանգամայն Հոգաբարձուհի, միշտ հոգացել է մայրական խնամքով եւ յանախ այցելութեամբ ոչ միայն ուսումնարանի նիւթական ապահովութեան վերայ, այլ եւ նորա ծաղկման եւ յառաջադիմութեան վերայ։ Արդ իսկ լինելով Կ. Պոլսում անձնական տկարութեան պատճառով, չէ պակասացնում նոյն ուսումնարանից իւր խնամակալութիւնը եւ հեռաւոր տեղից։

Տեսուչ Ս. Գայիանեան Օրիորդաց
ուսումնարանի Վարչապետ.
ՎԱՀԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՌՏԱՄԵԱՆՑ

է 28 մարտի 1875 մ.

է Ս. Էջմիածին.

ՎԻՃԱԿԱՑԻՆ ԴՊՐՈՑ ՅԱՂԵՔՍԱՆԴՐԱՊՕԼ.

Աղեքսանդրապոլոյ Հոգեւոր դպրոցը, բարեպաշտ եւ Ազգասէր Հոգաբարձուաց հետ, Փոխանորդ Արժ. Սուրիաս վարդապետ Պարղեանցի եռանդուն ջանքը, վիճակին կարի անհրաժեշտ կարօտութենէն ստիպեալ, համաձայն թեմական դպրոցաց, Վիճակային Դպրոցի փոխարինելոյ կանոնադրութիւնը վեհ. Հայրապետ ամենայն Հայոց հաստատեց հանդերձ օրհնութեան եւ բաջալերական կոնդակաւ։

Նոցա այսպիսի նախանձելի եւ անխոնջ ջանքը եւ եկեղեցաշահ նպատակը հանդերձ շնորհակալութեամբ կգովեմք, եւ կմաղթեմք կարողութիւն, յաջողութիւն, եւ յարատեւ արդիւնաւորութիւն։

ՕՐԻՈՐԴԱՑ ՍԱՀԱԿԱՆՈՑՑ ԵՒԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Այնպէս հանդերձ շնորհակալութեամբք կնշդրդեմք մեր սիրելի Ազգայնոց Աղեքսանդրապոլոյ երկսեռ Հոգեւոր դպրոցաց համայն վարժապետաց եւ տեսչաց այն անձուկը, զի տեղւոյն աղքատիկ օրիորդաց մտաւորական Ջշուառ վիճակին կարեկցելով, ըստիպեալ յազգասիրութենէ, տեղւոյն Ս. Աստուածածին եկեղեցւոյ հովանաւորութեան ներքեւ բացուելի Սա-